

Դաս 4. Ծրագրել ծառայություն և միջոցառումներ

Դուք կարող եք ուսուցանել այս դասն ամբողջությամբ կամ բաժանել այն ավելի կարճ հատվածների: Դասը հարմարեցրեք ձեր տեղական հանգամանքներին և ձեր քվորումի ու դասարանի նախագահության կարիքներին, տարիքին և հասկացողությանը:

ՍԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՆԵԼ ՄԵՋ ՇԵՏԵՎԵԼ ՓՐԿԻՉԻՆ

Իր պատանեկության տարիներին Քրիստոսը «զարգանում էր իմաստութիւնով և հասակով, և շնորհքով՝ Աստուծոյ և մարդկանց մօտ» (Դուկաս 2.52): Քվորումի և դասարանի նախագահության անդամներին խնդրեք քննարկել, թե ինչու են կարևոր ծառայությունն ու միջոցառումները: Դրանք ինչպե՞ս կարող են օգնել մեզ ավելի նմանվել Փրկիչին:

ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԿԱՏԱՐԵԼ ՏԻՐՈՋ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Խնդրեք նախագահության անդամներին վերանայել սկզբունքները, որոնք թվարկված են [Ծառայության և միջոցառումների ուղեցույցներ երիտասարդների համար](#) ձեռնարկում: Հանձնարարեք նրանց օգտագործել [Ծառայության և միջոցառումների պլանավորում](#) ձեռնարկը, որը կօգնի նրանց կազմել ծառայության և գործունեության մի քանի գաղափարների ցանկ՝ համաձայն այդ սկզբունքների: Խնդրեք նրանց ավելի հանգամանալից կազմել այդ միջոցառումներից մեկի ծրագիրը՝ օգտագործելով [Ծառայության և միջոցառումների մանրամասն ծրագիրը](#): Նախագահության հաջորդ ժողովին խնդրեք նրանց վերանայել իրենց ունեցած միջոցառումները, և թե որքան հաջող են դրանք անցել՝ համաձայն [Ծառայության և միջոցառումների ուղեցույցներ երիտասարդների համար](#) ձեռնարկի սկզբունքների:

ՕՃԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ

- Ծառայության և միջոցառումների գաղափարները հասանելի են ChildrenandYouth.ChurchofJesusChrist.org կայքում:
- *Ընդհանուր ձեռնարկ. Ծառայել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում*, բաժին 20, ChurchofJesusChrist.org